

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման մարզային
շտաբի նիստի

23.03. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյան -մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյան -գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ա.Մատինյանը, Ա.Սահակյանը, Վ.Հովհաննիսյանը Կ.Ալչանգյանը, Տ.Կարապետյանը, Ս.Գաբրիելյանը, Լ.Դալլաքյանը, Կ.Սողոյանը, Ս.Լամբարյանը, Ա.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Կատարված աշխատանքների ներկայացում:
2. Ներկա վիճակի ներկայացում:
/զեկ.՝ Ա.Հովհաննիսյան/
3. Առկա խնդիրների քննարկում:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վ.Հովհաննիսյանին՝

ա/ Առաջարկել Լոռու մարզում տեղակայված բանկերին՝ պարբերաբար ախտահանել բանկոմատները.

բ/ Առաջարկել հաց արտադրող կազմակերպություններին՝ սպառողներին հացը արտահանել միայն փաթեթավորված վիճակում:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝

Առաջարկել հոգեբանական ծառայություններ մատուցող առողջապահական կազմակերպություններին, «Կարմիր խաչի» միջազգային կազմակերպությանը և ԱԻՆ «911 ծառայությանը», անհրաժեշտության դեպքում, հոգեբանական ծառայություններ մատուցել ինքնամեկուսացված և հոգեբանական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ